

## Բ.

Յառաջարանի մէջ յիշուեցաւ այս պատմութեան ձեռագրին սկզբան պակասութիւնը. հիմակուան եղածին առաջին երեսն այլ քիչ մի մաշած և դժուար կարդալի է. ասկէց թուի սխալ թուական կամ քանի մի բառ պակաս, որով շփոթի ըսածն. որ է այսպէս:

« Սկսինք օգնութեամբ և առաջնորդութեամբ Աստուծոյ: Մեր ժամանակիս, այսինքն ի սկզբան 564 տարւոյ (հիճր. որ է հոկտ. 1168—1169 սեպտ. թուին Քրիստոսի), եղաւ վերաշինութիւն Ս. Յակովբ կոչուած եկեղեցւոյն (Հայոց), որ Եզրիպտոսի Այգեստան կոչուած վիճակին մէջն է, բլրոց մօտ »:

Բնագիրն՝ Ալ-Պասադին البساتين յօգնակի գրէ՝ ուրիշ տեղ Ալ-Պուսդան ըսածը, որ է այգի, պարտէզ, պահէզ, և Գահիրէ մայրաքաղաքէն քանի մի մղոն միայն հեռու է՝ յարեւելեան հարաւային կողմն: Տեղն ստոյգ, ըսած թուականն կամ վերաշինու-